

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2019 թվականի
նոյեմբերի 22-ին կայացած Գիտական Խորհրդի N3 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 28-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Հեռակա ուսուցման ասպիրանտների ատեստավորում /զեկ. ամբ.վարիչներ/
2. 2020/2021 ուս.տարվա ընդունելության կարգի և տեղերի թվաքանակի քննարկում /ըստ մասնագիտությունների/ /զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/
3. «Մերվիսի» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ /զեկ. ամբ.վարիչ Ս.Ռ.Սուվարյան/
4. Գիտական կոչման շնորհում
5. Ընթացիկ հարցեր

1.1 ԼՄԵՅԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Վահագն Գրիգորյանի հաղորդումը Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արմինե Մնացականյանի** և 2-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Անի Հակոբյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության

ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտներ **Արմինե Մնացականյանին** և **Անի Հակոբյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

1.2 ԼՄԵՑԻՆ. Ֆիզ. աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոցենտ Ա.Գրիգորյանի հաղորդումը Ֆիզ. աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Սեդա Վարդանյանի**, 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Արմենուհի Եղիազարյանի** և 2-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Հասմիկ Քոչարյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ֆիզ. աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտներ **Սեդա Վարդանյանին**, **Արմենուհի Եղիազարյանին** և **Հասմիկ Քոչարյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

1.3 ԼՄԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը սերվիսի ամբիոնի 1-ին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտներ **Ռենա Վարդանյանի** և **Ջուլիետա Հովասափյանի**, 2-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Ամալյա Նավասարդյանի** և 4-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Շամամ Գևորգյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի ասպիրանտներ **Ռենա Վարդանյանին**, **Ջուլիետա Հովասափյանին**, **Ամալյա Նավասարդյանին** և **Շամամ Գևորգյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

1.4 ԼՄԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ Ս.Ն.Հայրոյանի հաղորդումը ամբիոնի 3-րդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ **Միփան Մանուկյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Միփան Մանուկյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

2 ԼՄԵՑԻՆ. դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը 2020/2021 ուս.տարվա ընդունելության կարգի և ըստ մասնագիտությունների հասկացված տեղերի թվաքանակի վերաբերյալ: Մ.Գրիգորյանը նշեց, որ դրված հարցը էական է, որը պահանջում է գիտխորհրդի կարծիքի անհրաժեշտությունը: Մ. Գրիգորյանը, առաջարկվող ընդունելության տեղերի քանակն ըստ մասնագիտությունների, անընդունելի է համարում: Նա նշեց, որ ամբիոնի վարիչների հետ նշված հարցը քննարկելուց հետո, որոշվել է ընդունելության տեղերի հետևյալ քանակն ըստ մասնագիտությունների՝ երկրաբանություն – 36 տեղ, աշխարհագրություն - 48 տեղ, քարտեզագրություն և կադաստրային գործ – 42, սերվիս – 80: Մ.Գրիգորյանն իր խոսքում դրական գնահատեց ուսումնական պլաններում ուսանողների թվաքանակի վերջնական ամրագրումը նախքան ուսումնական տարվա սկիզբը, ինչը հնարավորություն կտա գերծ մնալ աշխատանքային ուսումնական պլաններում և հաստիքացուցակներում մինչև հոկտեմբեր ձգվող փոփոխություններ կատարելուց:

Մ.Գրիգորյանն առաջարկեց ռեկտորատի և նախարարության առջև հարց բարձրացնել երկրաբանություն մասնագիտության ընդունելությունը կազմակերպել մեկ միասնական առարկայի՝ մաթեմատիկայի քննությամբ, ինչպես վճարովի այնպես էլ անվճար տեղերի համար:

Անի Հակոբյանն առաջարկեց նշաձողը բարձր դնել, որպեսզի դիմորդների և արդեն իսկ ընդունվածների մեծ քանակը չխանգարի մրցույթի կայացմանը:

Մարգիս Հայրոյանն առաջարկեց ուսումնառությունը իրականացնել ըստ մասնագիտացումների՝ դրանով իսկ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստում:

Ելույթ ունեցան Թ.Վարդանյանը, ում համոզմամբ քանակը չի կարող որակ ապահովել

- Ռեկտորատի կողմից ներկայացված ընդունելության նախնական թվերն իրատեսական էին, բացառությամբ Երկրաբանություն մասնագիտությանը հատկացված նախնական թվաքանակից,-ասաց Թ.Վարդանյանը: Նա առաջարկեց կազմակերպել ընդունելություն՝ Ջրաօդերևութաբանություն, Գեոէկոլոգիա, Տուրիզմ, Հյուրանոցային գործ մասնագիտություններով:

- Որակ ապահովելու համար մենք պետք է գնանք նոր մասնագիտություններ ընտրության ճանապարհով, նույնիսկ ուսանողների ընդհանուր քանակի կրճատման գնով,- նշեց Թ.Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ա) Ձայների **27-Կողմ** և **1-Դեմ** քվեարկությամբ **հաստատել** ընդունելության տեղերի հետևյալ քանակը՝ երկրաբանություն – 36 տեղ, աշխարհագրություն – 48 տեղ, քարտեզագրություն և կադաստրային գործ – 42, սերվիս – 80:

բ) Երկրաբանություն մասնագիտության ընդունելությունը թե՛ վճարովի և թե՛ անվճար տեղերի համար կազմակերպել մեկ քննությամբ:

3 ԼՄԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի վարիչ դոց. Սեյրան Սուվարյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ: Ս.Սուվարյանը մանրամասնորեն ներկայացրեց ամբիոնում տարբեր ուղղություններով կատարված աշխատանքը, ամբիոնում առկա հաստիքների քանակը, ինչպես նաև ուսանողների քանակը: Նշեց որ ամբիոնում կատարվում է ավելի շատ աշխատանք քան նշված է ծանրաբեռնվածության մեջ: Ունենք ավարտական և կուրսային աշխատանքների կատարման հրահանգ, որը կիրառության մեջ դրվեց ռեկտորատի կողմից: Ս.Սուվարյանը ցավով նշեց ժամանակի սղությունը ուսանողների հետ անհատական աշխատանքներ տանելու համար: Մասնագիտությունը ձևավորվում է պահանջից /հաշվետվությունը կցվում է/:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Մ.Գրիգորյան – Նոր մասնագիտություններ բացելու ի՞նչ հնարավորություններ ունի ամբիոնը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. **Պ.Դավթյանն** իր խոսքում նշեց, որ «Սերվիսի» ամբիոնը ֆակուլտետի ամենաձանրաբեռնված ամբիոնն է: - Ի պատիվ ամբիոնի դասախոսական անձնակազմի ջանքերի իրենք կարողանում են կոորդինացնել կրթական գործընթացը: Առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Վ.Վարդանյանն ասաց, որ ամբիոնը լուրջ գիտական և կրթական մեծածավալ աշխատանք է կատարել: Ունի ուսանողներին կրթելու և դաստիարակելու ծրագրերը: Ողջունեց «Սերվիս» մասնագիտության ասպիրանտական ծածկագիր ձեռք բերելու գաղափարը: Ամբիոնը ուս. տարում իր առջև դրված աշխատանքը կատարել է: Գտնում եմ կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Մ.Գրիգորյան - Ամբիոնի դասախոսական անձնակազմն ունակ է իր առջև դրված խնդիրները լուծելու, սա մեծ պոտենցիալ ունենալու արդյունք է: Առաջարկում եմ կատարած աշխատանքը գնահատել բավարար,- ասաց Մ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետու ժամանակաշրջանում «Սերվիսի» ամբիոնի վարիչ Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

4 ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասիստենտ, աշխարհագրական գիտությունների թեկնածու Սերոբ Արամի Սուլջանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Ս.Սուլջանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժնու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Ս.Ա.Սուլջանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խարհրդին այն դնել քննարկման:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ – դոց.դոց.Պ.Գ.Դավթյանը, Մ.Ա.Գրիգորյանը: Նրանք բարձր գնահատելով Ս.Սուջյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում, գտնում են, որ նա արժանի է դոցենտի կոչում ստանալու և առաջարկեցին հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Ա.Հ.Պոտոսյան, անդամներ՝ դոց.Պ.Գ.Դավթյան և դոց.Ս.Ս.Քելյան:

ԼՍԵՑԻՆ – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Ա.Հ.Պոտոսյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 27-ը: Սերոբ Սուջյանին դոցենտի կոչում շնորհելու համար կողմ են քվեարկել 27-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ չկա:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և շնորհել Սերոբ Արամի Սուջյանին՝ դոցենտի գիտական կոչում:

5. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

5.1 ԼՍԵՑԻՆ. Մեթոդ-խորհրդի նախագահ **Թ.Գ.Վարդանյանի** հաղորդումը «Սերվիս»-ի ամբիոնի ասիստենտ Տիգրան Պետրոսի Դավթյանի «Ձեռնակատիրությունը սերվիսում» ուսումնամեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. դոց.դոց.Գ.Մարկոսյանը, Շ.Խաչատրյանը, Ա.Պոտոսյանը, Ռ.Մովսեսյանը և Հ.Մովսիսյանը: Նշեցին, որ ուսումնամեթոդական ուղեցույցն ունի կարևոր նշանակություն «Սերվիս» մասնագիտության ուսանողների համար: Դեկան **Մ.Ա.Գրիգորյանն** իր խոսքում նշեց, որ ներկայացված ուղեցույցի պահանջը զգացվում է, հատկապես նշված մասնագիտությամբ անցկացվող գործնական պարապմունքների կազմակերպման և անցկացման

Ժամանակ: Այն գրված է մասնագիտական բարձր մակարդակով, շարադրված է պարզ և ընկալելի:

- Առաջարկում եմ այն երաշխավորել տպագրության,- ասաց Մ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 1. Երաշխավորել «Սերվիս»-ի ամբիոնի ասիստենտ Տիգրան Պետրոսի Դավթյանի «Ձեռնակատիրությունը սերվիսում» ուսումնամեթոդական ուղեցույցը տպագրման և հրատարակման ներկայացնելու համար:

5.2 ԼՄԵՑԻՆ. դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը Որակի ապահովման հանձնաժողովի կազմի առաջադրման և հաստատման վերաբերյալ: Հաղորդման մեջ նշվեց, որ հանձնաժողովի կազմը պետք է ընդգրկի 4 անդամ՝ նախագահ, 3 անդամ՝ ներառյալ 1 ուսանող: Մշտական

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Վահրամ Պանդուխտի Վարդանյանի, Սեյրան Սուվարյանի, Ռուբեն Մովսեսյանի և Գևորգ Գրիգորյանի թեկնածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել Որակի ապահովման հանձնաժողովն առաջարկված կազմով. նախագահ-Վահրամ Վարդանյան, Սեյրան Սուվարյան, Ռուբեն Մովսեսյան և Գևորգ Գրիգորյան:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան